



176. ԹԱԳԱՎՈՐԻ ՏՂԱՆ

Նաղլը-նաղլը հարկս ա,
Ղաշխա քռոակ տակս ա,
Զիզի հարսը թարբյս ա:

Խնում ա, ինում չի մըն թաքավեր, էս թաքավերիս ինում ա
իրեք տղա: Ուրերեն մըն օրը թաքավերը հիվընդանում ա, տեղի
տակ ինգյում, մըռնելի վախտը կյամ ա: Կանչում ա նիրան տց-
դորցը, աման մընին մըն խընձոր տամ, թա.—Աման մընըտ
նիրան խընձորը ծեռքին քյացեթ քըղաքին միշին մըն պնկոր կա,
էն պնկորին կըլիան խընձորին թոլ ըրեթ, խընձորը հուր մղակ
ինդի, ընդա ախճիկը ուղեցեթ:

Տղերթը խընձորին եր են օնում, վեր քյինան, Հերն ասում
ա.—Այ տըղերթ, ծեղ էրկու քեր օնեթ, վեր փըսակվեթ, պրծնեթ,
ծեր քըվորցըն էլ մառթի կտաք, ամմա լսեցեթ հա՛, ըռաշի դժ-
նումը հու եկը ծեր քըվորցան ուղիլի, ընդան էլ կտաք, հինչ օզում
ա ինի: Հերն ասում ա, մեռնում: Տղերթը առոք-փառոք նիրանց
հորը թաղում են, օխտը տամ, քըոասումթը կտրում, ետավ նիրանց
խընձորին եր օնում, քյունում էն պնկորին կլիխին կաղնում, տեր
աստոծ ասում, խնձորին թոլ անում:

Մեծ տղին խընձորը քյունում ա մեծ վեղիրին տուոնը ին-

գյում, միշնակ տղինը քյանում ա բըղարի ամենահարուստ մառթին տուռնը ինպյում, կումի տղին խընձորն էլ թոլ ա ունում, քյունում ինդյում հանգիւտարանը: Իրեքան ախապերը ուրանց խունձորներին ենդան վաղ են տամ: Մեծ տղան տեսնում ա վազիրին ախճիկը ուրանց բըլկոնում կաղնած, ուրան խընձորը ձեռքին ծիծացաց ա, ասում ա.—Տու ես, վեր տու ես իմ նշանածս: Միշնակ տղան էլ քյանում ա տեսնում ուրան խընձորը բըղաքին ամենահարուստ մառթին ըխնըկանը ծեռքին, ուրանց բաղումը ման ա կյամ, ասում ա.—Իմ նշանածս տու վես, վեր տու վես:

Կումի տղան քյանում ա հանգիւտարանը, տեսնում ուրան խընձորը մըն մեյմունի ծեռքի: Մըն քարի նըստոմ ա լաց ունում ուրան բախտին յիրա, օզում ա տեղ թողնի կյա: մընել մետն ա կյամ հորը վասյաթը, եր ա կենում, մեյմունին թընթուլան փըռնում, կյամ տոն, ինքն ուրան սերտ տինիլով:

Իրեքան ախապերը մորը նաղլ են անում, թա հինչ պըղահնց ուրանց զլխին: Մերը շատ ա ուրխանում, վեր մեծն ա միշնակ տղորցը լավ ըխնըկերը են ուռուցահ եկալ, ամմա կումի տղին ասում ա.—Ա՛ վերթի, տու էտ մեյմունտ պերալ ես հինչ անի, օրտ ըտա հետ խավար շես ընիլու, տեղ թողի, թող քյինա, օրիշ օզի: Կումի տղան ասում ա.—Զէ՛, ա մեր, իմ հորս վասյաթն ա, լավ ա՝ էս ա, փիս ա՝ էս ա, իմ բախտիս քացի լըմ տալու, ուստուր էլ պըհիլու վեմ: Հիշքան մոտիկ-պարիկամ, մերը, ախապերը ասում եմ մեյմունին տեն ըրա, ճար լի նում,—չէ՛,—ասում ա,—էս ա վեր կա, պետմա պահեմ:

Կյամ են մեծ տղին հըրսանիքն անում, օտում են, խմում են, պար են կյամ, կումի ախապերն էլ մեյմունին թողում ա ուրան ութաղումը, հըրսընքին դրազին նըստում, զըրգըլուտած թմաշա անում: Մերն ասում ա.—Ա՛ տղա, եկ քու ջաճիլ օրբտ խավար մի անիլ, էս ըխնըկորանցաս մընին օզի, մեյմունին էլ տեն ըրա քյինա: Տղան ասում ա.—Զէ՛, այ՛ մեր, հինչ վեր ճըկատիս կյիրած ա, էս էլ պետք ա ինի:

Հըրսընքին կեսումը տեսնում են մըն հուրումնալազյ ախճիկ նի մըտավ պար եկը: Էնքան նախշուն ա ինում էտ ախճիկը, վեր շափաղը տըռներավը տուս ա կյամ շունքին տամ, վեր մառթ ասում ա.—Ա՛ ախճիկ, վել օտես, վել խմես, լըհա թըմաշա անես: Հըրսընքավերը դեշանը ուրուր անա հըրցընիլը թա էտ հուր ախճիկ ա, հու վա, ըշտըղացի յա, էտ ախճիկը պար ա կյամ, սազանդարեն կյուլոխ տամ, տուս կյամ կորչում: Մերը կումի տղին

ասում ա.—ԱՇ տղա, բս էն ախճիկն օդի է... քյացալ ես մեյմունին յախան կտրալի էս խեղա տղաս պռնգնած-պընդնած, մըտքմուլոր կյամ ա տոն, ուրան մեյմունին կոխկին նըստում, լաց ժնուում: Մեյմունը լուզու վա առնում, ասում.—Էյ, ա՛ տղա, խե ես լաց ժնուում: Տղան ասում ա.—Բա հինչ ա՞նեմ, վեր լաց շինեմ, շիմ ինձ թոք ու թոհմաթ են անում, թա խե՞ ես մեյմունին պահում: Մեյմունը բանդ ասում ա.—Գյուղում ե՞ս հինչ, թաքավերի տղա, էն ախճիկը վեր մ՛նկս հրսնքումը պար եկը, ես ի... ես մըն թաքավերի ախճիկ եմ, մեյմունի խըրխա կլեցած, եկալ եմ քեզ նարալ, ամմա բըզանա դիման վել մընը գլիդալ լի պիտի, թա հու վեմ, հոսա ասում եմ հա՛... միշնակ ախպորը հըրսնքավն էլ եմ կյալու պար կյամ, ամմա վել մինին ասես վեշ, վեր ես մեյմունն եմ, մենակ տու դյիդա, վեր մըն հոքի էլ դյիդաց, էլ իմ տերս չես, փըխճիլու վեմ բյինամ:

Կունի տղան շատ ա ուրխանում, ծիժազում, վեր թհենց պան կա, որախ-օրախ քյունում ա ախպորը հըրսնքին: Մըն վախս մըն դկ հըրսնքին տիուանը կազնում ա, ոռում, թա.—Էյ, թաքավերի տղերը, ծեր մեծ քվորն ինձ տվեք օզեմ, տանեմ: Ախպերքը տուն են կյամ: Մեծն ա միշնակ ախպերն ասում են.—Գյինա խոադ իլ, լհա տու իր մնացալ, վեր մեր քվորը քեղ տանք: Ամմա կունի ախպերն ասում ա.—Զէ՛, մեր հերը մեղ վասյաթ ա ըրալ, թա սիմթա հու վեր կյա մեր քվորցան օդի, տանք: Մեծ քվորը ծեւրան փրոնում ա, տամ դմին: Դնեց եր ա օնում, քյունում: Մըն խիլա ևտավ էլ մըն աժդահա առշ ա կյամ, թա կունի քվորն էլ տանի: Էլլա մեծ ախպերքը ըռազի շեն ժնում, ամմա կունի ախպերը կունի քվորն էլ տամ ա առշին, առշը տանում ա:

Կյամ ա միշնակ ախպոր հըրսնքավերը Հըրսնքավերը էլլա թոք ու թոհմաթ են անում կունի տղին, վեր մեյմունին պահում ա: Մըն վախս էլլա համան հուրիմալագյ ախճիկը վեր նի ա մըտնում պար կյամ, տղորցը մերը կունի տղին ասում ա.—ԱՇ վերթի, մեյմունին տար կուրցրու, հոս ա էս թառլանս օզի: Մեր ա էլի, սերտը ցավում ա: Ըտեղ կունի տղան էլ համփերում լի, մորն ասում ա.—ԱՇ մեր, ըստուծանա թաքում լի, բըզանա հի՞նչ թաքում ինի, համան ախճիկը մեյմունն ա, իմ կնեկյաւ:

Ախճիկը պար ա կյամ, տեղ թողում, քյունում: Կունի տղան էլ դիրետան կյամ ա: Մերը մեծ տղորցը ասում ա, իրեցանը խորուրդ են անում, թա եկեք քյինանք էն ըխճեկանը խիրխան կյուղանանք,

թորքնը բիցինք, վեր էլ մեյմուն լինի: Կումի տղին կանչում են, ներանց մըտքինը ասում, համ էլ ասում.—Թիշերս տունը միշի դուան մրցնես վեշ, վեր կյանք կընգանա խիրխան տանենք: Կումի ախպերը զարուկ ա կենում: Կյամ ա մեյմունին կոխկը, շորերը հանում, պըրանում: Մեյմունն էլ ուրան խիրխան հանում ա, նի մըտնում տղին ծոցը, թա.—Թաքավերի տղա, տունը պենդ ե՞ս մրցրալ: Տղան ասում ա.—Հա՛, ա՛ կնեկյ, արխային կաց, պենդ եմ մրցրալ: Թու են ունում: Դե կոմի ախպերը ըշտե՞ղ ա տունը մրցրալ, լհա նշենց նըհետ ա ըրալ: Դիբալթնին մեծ ախպերը կյամ են ըխճեկանը խիրխան կյուղանում, տանում քյուցում պըրացած թորենը: Ախճիկը իմաստուն ա ունում, տեղան ծարս ա հմում, թա.—Թաքավերի տղա, քու տոնդ քանդվի վեշ, վեր իմ տոնս քընդեցիր, իմ խիրխաս էրում են, ես քյինացի, տղա ես, ենդաս եկ:

Թաքավերի տղան մնջիւմ ա ըտուր վենդին-ծերքին, լաց-ըղաշանք անում, թա.—Տիշեր աստոծ, տուվեր տու, եկ քյինա միրու Ախճիկն ասում ա.—Չէ՛, ես քյինալու վեմ, ամմա թա օզում ես ինձ ճարես, կյաս վեշ հա՛... շատ տիժար ա իմ տեղս... Ախճիկն ասում ա.—Վեր թէնց ա ըրկաթի տրխնի կյենաս, ըրկաթի գավազան ծեռքտ եր օնես, օխտը տարի ման կյաս, ըշտեղ վեր տըրխնիտ պուք կյա, ըրկաթի գավազանն էլ հալդի-մաշվի, ընդեղ էլ ինձ ճճարես: Ասում ա, տուն կյամ, կորչում:

Խեղճ տղան յանդի-յանդի յա կյամ, ըրկաթի տրխնի կյենում, ըրկաթի գավազանը ծեռքն օնում, մըն կուտուր հաց մեշկը կապում, քյիննում, քյիննում...

Քյունում ա, քյունում, շատ նան քիշը աստոծ գյիզա, հըսնում ա մըն յրանա գուղի, վեշ ինս կա, վեշ շինս, ինքն էլ սոված-ծարավ, տես ա եշում, տես ա եշում, տեսնում մըն տեղա մըն ծոխ ա եր ինում: Դե հինչ կինի, կինի,—ասում ա, քյունում էն ժոխին յիրա: Հըսնում ա մըն տեղ, տեսնում տափին տական ծոխ ա եր հմում, մըն ըրկաթի տունը կա, տունը թակում ա, նի մըտնում, տեսնում ուրան քերն ա, թերն ախպորը վեր տեսնում ա, տեղան ծլոնդ ա հմում, մազերը քանդում, թա.—Ա՛յ ախպեր, էտ վեր քամին ա քեզ պերալ էս յըրանա գուղս, հինչ ա՞նեմ, եր կաց փախշի, թաշնա մըհեկ մեծ գեր՝ իմ մառթս կյալու վա, քեզ օտի: Ախպերը լաց ա հմում, թա.—Ա՛յ քեր, էլ տեղ շօնեմ քյինալի, առված էլ մեռնում եմ, հինչ օզում ա անի քու մառթտ: Էտ գարումը մըն ուրոտուց ա կյամ, տափիերը տուրուր են կյամ.—Հա՛յ, —ասում

ա մեծ թերը, — դեղ նկը, նի մըտ ըշկափը, տափ ըրա: Ախպորը, կոխում ա ըշկափին մեզը, ինքը ուրան պանին կենում: Ուռալավ, թելալավ դեղ նի ա մըտում տոն, շելակը եր տհմում, թա. — Ա՛ կնեկը, մարթի վետ ա կյամ, էս հի՞նչ ինսան ա իմ տանս: Կնեկը ասում ա. — Չէ, չէ լ՛ա մըն..., տեսնաս հինչ վետ ա ինգյալ կյանոխտ, նստի, հացտ կեր:

— Չէ, — ասում ա դեղ, — դժողն ասի, թաշնա եր եմ կնալու ման կյամ ճարեմ, հու վեր էլ ինի, օտեմ: Ծարը կարած, կնեկը ասում ա. — Ա՛ մառթ, ըստուծանա թաքուն չի, բըղանա հի՞նչ թաքուն ինի, իմ ախպեր նկալ ա:

— Հաաա՝, — ասում ա դեղ, — լավ ա ըրալ, թա մեծ ախպերը ինի, ուսիլու վեմ, միշնակն ինի՝ ուտիլու վեմ, կումինն ինի, աշեկիս յիրա տեղ օնի:

Թերը ախպորը ըշկափան տոնս ա օնում, դեղ տեսնում ա, վեր կումի ախպերն ա, վրենդը-ծերքն ա ինգյում, թա. — Պարով նսեկալ, իմ ազիզ հաներ, մըն ասի տեսնամ հինչ քամի յա բնկ պերալ էս վերանա աշխարս՝ իմ դեմքի թաքավերությունը:

Թաքավերին տղան նըստում ա կըլխավն անց կըցածը նազ անում, թա. — Հալ դազիյա, սըհենց-սըհենց, քյունում եմ նշանածո ճարեմ: Դեղ կյանոխը տոնիրուր ա տամ, թա. — Բահո... այ հաներ, տիժար պան ա, ընդեղ քյինացողը ետ չի կյամ, ամմա հինչ կարամ, քըզհետի կանեմ: Ուրան լալան մըն դաստա մազ ա պուկում, տամ հանորը, թա. — Թել ծեռքիտ պահի, հեփ վեր նեղը կինգես, հարկավեր կյամ, մազս տոնիրուր կտաս, կիկյամ:

Թիշերը քոն ա ունում, ըռավետը պաշարավ-պանավ նընհապս ինգյում: Դեղ թաքավերին տղին տանում ա ուրան երգիիրին սահմանը, թա. — Դե քյինա, թաքավերի տղա, էս նրգյիրս էլ իմ քաշանաղի վեղն ա, քու կումի քվոր տոնը, քյինա, բաջանաղս էլ քեզ քյումազ կանի:

Թյունում ա, հոմց վեր դեին նհետ ա պտահալ, պտահում ա առյին նհետ էլ: Ըտեղատ էլ քյունում ա, քյունում, շատը քիշը աստոծ գյիղա, տեսնում ա մըն արխի զրադի միրչեմնի յին հըվաքվալ, օզում են արխն անց կենան, ամմա նի յին տառնում ճոնքը տանում ա: Ըստեղ էս տղի մեխկը կյամ ա, մըհակը կարմինչ ա քյունում արխին էս զոլաս էն զոլը: Հիշքան միրչեմնը կա, լոխ անց են կենում: Վեր լոխ անց են կենում, մըն մեծ միրչեմնը ասում ա. — Ա՛ տղա, տու վեր էտ լըվոթունը ըրիս, ես արծնիլ շեմ, մեր թշնամի միրչեմնը թաքավերը ինձ զոռալ ա. վեր էս արխս անց չի կնիքյ, մեզ կոտորիլու էր, աստոծ քեզ քյունում:

մազ ինի, վեր մեզ ազադեցիր, ես էս միրչեմներիս թաքավերն
եմ, հինչ ե՞ս օգում, վեր տամ քեզ: Թաքավերին տղան ասում
ա.—Տու վես գյուղում, հինչ օգում ես, տու: Միրչեմնը թաքավերը
մըն միրչեմնի նոռնը պուկում ա տամ տղին, թա.—Տիր ծոցումտ,
ըշտեղ հարկավեր կյամ, կկանչիս, կկյամ:

Թաքավերին տղան միրչեմնին նոռնը տղնում ա դեխին, մըն էլ
առշին թությին նըհետ, քյունում: Քյունում ա, քյունում, շատը
նան քիշը աստոծ գյիղա: Մթեն երգիրնի յա անց կենում, ծովիր,
կյետեր ա կտրում, օխտը տարին թըմամում ա: Մըն պացրու սար
ա հնում, հըսնում ա էտ սարիտ, տեսնում մըն միսպուր, նուր
ա խմում, եշում տեսնում ըրկաթի տրինին հալվալ-մաշվալ
են, ըրկաթի գավաղանն էլ մնացալ ա հափուալը մըն: —Ըհը՛, թա
էն ախճիկը սաղ ա, ըստեղ ա ինիլու: Ըխպրան նուր ա խմում,
քոն ինումտ: Տու մի ասիլ, թա համան էն ըխճըկանը հերը աման
տարի ամառնը կյամ ա էտ սարտ դաշ:

Էտ տղիտ նշանածը ուրան ըռաւշքին ծառայող ըխճըկորցան
մընին զարկում ա, թա.—Թյինա ցորտ-ցորտ նուր պեր ծեռքերս
լիվանամ: Սառայողը կյամ ա վեր նուր լցնի, տեսնում ա մըն
նախշում տղա ըխպիրին կոխկին քոն իլած: Էնքան կյեղեցիկ ա
ինում էտ տղատ, վեր իսեղմ-ախճիկը մայիլ մնացած եշում ա,
նուրը մտան թըռնում ա: Տղին նշանածը տեսնում ա, վեր զա-
րավաշը նուր շի պենրում, կյամ ա դիբա ախպժիրը, տեսնում հա-
ման տղան ըխպիրին զրաղին քոն: Ղիմիշ շանում եր կցնի, շոք
ա անում, դեշանը նշանածը քոն ա ինում, եր կենում: Վեր աշկերը
պանում ա տեսնում հերան կընեկը կլինանը եր կաղնած, հնչը
քյունում ա: Նըշանածը մըն հետ տղին թոշան պաշում ա, հնչը
կյամ ա կիլոխը: Եր ա օնում, պուրում պալատը: Մըն քանի օր
մըտեղ կենում են, տղան ասում ա.—Ա՛ ախճի, եկ քյինանք մեր
երգիրը: Ախճիկն ասում ա.—Ա՛ տղա, իմ հերս մըն ազրայիլ
մառթ ա, վեր գյիղա: քեզ էլ, ինձ էլ թիբյա-թիբյա կանի, լավն էն
ա, ասենք իմ հորս, հալրաթ աստոծ մեծ ա, մըն յոն կանի:

Ախճիկը հորն ասում ա, թա սհենց-սհենց, իմ նշանածս եկալ
ա ինձ տանի: Հերը շար թաքավեր ա ինում, վենդը տափին ա
կյամ, թա էտ տղիտ պերեք, էս սհաթիս մուռթիլու վեմտ: Տղին պու-
րում են: Նազիր-վաղիրնին եշում են, տեսնում մըն հենց կյեղե-
ցիկ տղամարթ ա, վեր իշկի հալա թայը ախշար եկած շի: Խնթում
են թաքավերին, թա.—Թաքավեր, ափսուզ ա էտ տղիտ ըսպանսս,
եկ մըն օրիշ պան մտածի: Թաքավերն ասում ա.—Ղա՛վ, այ տղա,
քեզ մըն քանի պայման կտամ, թա կանես, հենա ախճիկս քեզ

կտամ, թա չէ, կյանուխտ կկտրեմ. էքյուծ իմ դեմ տուս ա կյալու մեջան, թա կրացիր մըն գե պիրես իմ դեմ նհետ կոխ կենա յախտի, հեն ա ախճիկս քունն ա, թա չէ, կյանուխտ կտրիլու վեմ:

Թաքավերին տղան կյամ ա հերան օթաղը, սոքըշիվան անում, սազ քիշերը քոնը տանում չի, մըտածում ա, թա էքուծ հունց պիտի անի կուսալուսին նշանածը կյամ ա, թա.—Ա՛յ մարթ, թա իշկի քեզ մըն ժանոթ-բարիկամ շօնե՞ս: Ախր տղին մըտան թռած ա ոննում ուրան փեսա դեզ: Վեր նշանածն ասում ա, մետն ա կյամ: Սոցան դեմին մազը տուս ա օնում, թափ տամ: Մըն էլ ա տեսնում ուրան մեծ քվոր մարթը՝ դեզ հըյաթումը կազնեց: Դեկին էր ա օնում, քյունում թաքավերին տունուրը: Ժուղովուրթը հըվար-վում ա, դեմերը կոխ են կենում, էս տղիս դեզ վեր թափ ա տամ, թաքավերին դեզ օխտը կյաղ տեն ա ինգյում, մեծ կուտուրը ան-չուկն ա տառնում:

Թաքավերը ըջըլվում ա, մըն աժդահա առշ տուս օնում, թա-քավերին տղան թափ ա տամ առշին մազը, հերան առշ փեսան կյամ ա, թաքավերին առշին յախտում:

Ըտանա ետը թաքավերը տղին քյունում ա մըն օթաղ, մըն մեշոկ կորենկ, մըն մեշոկ սորենկ ուրուր խառնում, թա մինչեկ ըռա-վետր էտա էտ կորենկատ սուրենկիր, կապրես, եթա չէ, կյանուխտ կտրիլու վեմ: Տղան նըստում ա մետքը անում, դե իշկի կընուկվի՞ մըն մեշոկ կորենկը մըն մեշոկ սորենկան: Լաց ա ինում սազ քիշերը, ծըքքուերին նշանածը կյամ ա տիռնին նեխնկավն ասում:—Ա՛յ տղա, թա տու մըն ժանոթ-պարիկամ շօնե՞ս, վեր կյա քեզ քյունմազ անի...

Ըտեղ աղին մետն ա կյամ միրչեմնին նոռնը, տուրուր տամ, մըն էլ էն ա տեսնում տոնը լցվեց միրչեմավ, մընը կորենկն ա եր օնում, մընը սորենկը, ճոկ-ճոկ թուփ անում, ուրուր անա ճոկում: Վեր պըրծընում են, լիման ենդան նի ա մըտում համան էն միր-չեմնը, վերին ճոռնը հեն ա տղին ժերբին, էտ էլ տեսնում ա կոր-ենին միշին մըն փոշ սորենկ ա մնացալ, եր ա օնում, տանում քյու-ցում սորենկին յիրա, թա.—էս էլ իմ պաժինս: Նոր տղան ճոնատ միրչեմնին նոռնը տամ ա հերան, միրչեմն թաքավերին շատ շու-նուրակալ ունում: Միրչեմնին տեղ են թողում, քյունում:

Թաքավերը կյամ ա տեսնում կորենկը սորենկան ճոկած, հընդ-րած, ճոկ-ճոկ կյունտած: Մընում ա արմանք-զարմանք կտրած, ամմա շատ փիս, լար թաքավեր ա ոննում, ըտանազ աս լի կենում:

Պհնդում ա մըն մեծ, մինչեսի երգինքը կոկիլիկ շինարու տակ շնչի պոլ անում, մըն ըստաքան լիքը ճիրավ տամ տղին, թա տիր կըլ-խիտ, նի՞ իլ շինարին, եթա մըն կաթ կըթացալ ա, վիզը տ կտրի-լու վեմ, Զինարում տակն էլ դե հիլի ա հափոի մեշ, մըն կաթ էլ կաթա, յուրուվալու վա:

Մեսը կեռիքն ա օնում խեղճ տղան, ըստաքանը ճիրավ սի-լա, տունում կըլիին, նըշնածին մըն մըտանի յա ունում, շատ փանդավ-հնարքավ, վեր նի յա տամ ըստըքանին, ճուրը միշին սառչում ա, ըստաքանն էլ տղին կլխան կենում: Տղան նի՞ ա ունում շինարին: Պիցրանում ա, պիցրանում վեշ ռոնդ օնի, վեշ պումախ: Շատ վեր պիցրանում ա, ուրան հորը երգիրը յուրովում ա: Օխ-տը տարի կորած-մուզորած, վեր հորը երգիրը տեսնում ա, դահ-րում ա, լաց ինում: Մըն կաթ ըրտասումք ինգյում ա հնկուն յի-րան: Զար թաքավերն ասում ա.—Ահը, ճուրը կաթաց, եր կյա, կյուկոխը կարիմ: Ախճիկն ասում ա.—Ա՛ հեր, խընթրում եմ մըն էտ ճիրիա համը օնես, տեսնաս աղի յա, թա նալի: Հերը համն օնում ա, թա աղի յա:

—Ա՛ հեր,—ասում ա ախճիկը,—էտ վեշ թա ըստըքանին ճուրին ա, էտ էն տղի ըրտասումքն ա, ուրան հորը աշխարքը տե-սալ ա, սերտը օզալ, լաց իլալ:

Տղան եր ա կյամ: Թաքավերն օզում ա մըն պայման էլ ասի, ամմա նազիր-վազիրնին հըվաքվում են, դանշանք-պղատանք ա-նում, թա.—Մեխակն ա, բոլ ա հինչ պայման տուվալ ես, եկ քարը կյոքատ եր ածի, ախճիկտ տու հիրան, շենքավ-շնորքավ տղա յա, ինքն էլ թաքավերի տղա:

Պհնդում են օխտը օր, օխտը քիշեր հըրսանիք անում, ենդան էլ քոասում օր քյեփ անում, պեռները կպոտում, հարսը նան փե-սան ճընհապա տունում:

Ընդանք հըսան ուրանց մուրազին, տուք էլ հըսնեք ժեր մու-րազին: Հստուծանա իրեք խինձոր եր ինզի, մընն ըսողին, մընը՝ յսողին, մընն էլ պատին ժական յիշողին:

